

Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից ձևավորած 2009 թվականի ապրիլ ամսվա նախադեպի ամփոփում

Ֆինանսական համակարգի հաշտարարը՝ համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի, իր մասնագիտական գործունեությունը սկսել է ծավալել 2009 թվականի հունվարի 24-ից: Ստորև ամփոփված է Հաշտարարի կողմից ձևավորած 2009 թվականի մարտ ամսվա նախադեպը:

Հաշտարարի գրասենյակն ապրիլ ամսին ստացել է ֆինանսական կազմակերպություններին վերաբերող ընդհանուր քանակությամբ երեսունհինգ բողոք: Ֆինանսական կազմակերպություններին չվերաբերող Գրասենյակի ստացած քաղաքացիների զանգերը բազմաթիվ են: Ֆինանսական կազմակերպություններին վերաբերող երեսունհինգ բողոքներից քսանմեկը համաձայն օրենքի ենթակա չեն քննության Հաշտարարի կողմից: Այդ հաճախորդներից 5-ն իրավաբանական անձինք են, 7-ի բողոքները կապված են մինչ Հաշտարարի մասին օրենքը ուժի մեջ մտնելը տեղի ունեցած իրադարձությունների հետ, 3-ի պահանջների վերաբերյալ արդեն իսկ առկա է դատարանի որոշում, կամ գործը գտնվում է դատարանի վարույթում, մնացած 6 բողոքները կրում են ընդհանուր բնույթ և ըստ ելույթի չեն պարունակում գույքային պահանջ:

Հաշտարարի քննությանը ենթակա տասնչորս բողոքներից երկուսը ստացվել են գրավոր տեսքով և ներկայումս գտնվում են քննության գործընթացում: Երեք հաճախորդներ բանավոր դիմել են Հաշտարարի գրասենյակ, որոնց Գրասենյակի աշխատակիցները պարզաբանել են իրենց իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև առանց գրավոր դիմումի առկայության բանակցել են ֆինանսական կազմակերպությունների հետ: Մրա արդյունքում նշված երեք բողոքները բավարարվել են կազմակերպությունների կողմից՝ առանց ֆորմալ պահանջը քննության ընդունելու: Մնացած ինը պահանջների քննությունը Հաշտարարի լիազորությունների շրջանակում էին, սակայն հաճախորդները նախապես սահմանված կարգով իրենց բողոք-պահանջները չէին ներկայացրել ֆինանսական կազմակերպությանը: Գրասենյակի աշխատակիցները օգնել են վերջիններիս ձևակերպել իրենց պահանջները և ուղղել ֆինանսական կազմակերպությանը:

Նախորդ ամսում Հաշտարարի կողմից ստացված վեց գրավոր պահանջներից մեկի վերաբերյալ կայացվել է պահանջը մերժելու վերաբերյալ որոշում, երեք պահանջները բավարարվել են՝ Հաշտարարի միջամտությամբ հաճախորդին և կազմակերպությանը հաշտեցնելու միջոցով, իսկ մնացած երկուսի մասով ներկայումս իրականացվում են կողմերի հաշտեցմանն ուղղված բանակցություններ:

Ներկայացրած ընդհանուր բողոքների քանակը	35
1. Ենթակա են քննության հաշտարարի կողմից	14
1.1. Ենթակա են քննության հաշտարարի կողմից, սակայն հաճախորդը նախապես չի դիմել ֆինանսական կազմակերպությանը	9
1.2. Բավարարվել են կազմակերպության կողմից՝ Հաշտարարի միջամտությամբ, սակայն առանց գրավոր դիմումի առկայության	3
1.3. Ընդունվել են քննության՝ գրավոր պահանջի ներկայացմամբ	2
1.3.1 Կապված են գրավատան կողմից գրավադրված գույքի իրացման հետ	1
1.3.2 Կապված են ժամկետային ավանդի հետ	1

Հաշտարարի գրասենյակ կարելի է դիմել՝ զանգահարելով 58-23-22, 58-23-21 հեռախոսահամարով կամ այցելելով Վազգեն Սարգսյան 26/1, «Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, 4-րդ հարկ, 411 սենյակ: E-mail: info@fsm.am

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՇՏԱՐԱՐ